



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՏԱՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԵՆԹԵՐ
ԳԻՏԱՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՐԾԻՔ
(AMICUS CURIAE) № 03/17**

11.04.2017թ.

ք. Երևան

Քաղաքացիներ Ալվարդ Գրիգորյանը և Խաչիկ Գրիգորյանը (**այսուհետ՝ Դիմող**) անհատական սահմանադրական դիմումով ՀՀ Սահմանադրական դատարանից խնդրել են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի (ընդունվել է 17.06.1998թ., ուժի մեջ է մտել 01.01.1999թ., ՀՕ-247)¹ 231-րդ հոդվածի 5-րդ կետի դրույթը համարել հակասող ՀՀ Սահմանադրության 10, 28, 61, 63, 73-րդ հոդվածներին և ճանաչել անվավեր, իսկ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233.1-րդ հոդվածի 1-ին կետի 5-րդ ենթակետի դրույթը համարել հակասող ՀՀ Սահմանադրության 10, 28, 61, 63, 73-րդ հոդվածներին և ճանաչել անվավեր:

Դիմողները գտնում են, որ ՀՀ վճռաբեկ դատարանն իր՝ 26.02.2016թ. և 01.06.2016թ. որոշումներով, վկայակոչելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի 5-րդ մասի և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233.1-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի դրույթները, իրենց վճռաբեկ բողոքը թողել է առանց քննության, բացառապես միայն այն պատճառով, որ «ՀԱՅՓՈՍՏ»-ի թիվ 0009 փոստային բաժանմունքում «ք. Երևան-0010 Հանրապետության 32/29» հասցեի փոխարեն գրվել է «ք. Երևան-0010 Հանրապետության 23/29» հասցեն: Դիմողները պնդում են, որ «ՀԱՅՓՈՍՏ»-ի սխալ աշխատանքի պատճառով իրենք գրկվել են արդարադատությանը մասնակցելու իրենց սահմանադրական իրավունքից:

Դիմողների կարծիքով՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի 5-րդ մասի և 233.1-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի դրույթները հակասում են ՀՀ Սահմանադրության 10, 28, 61, 63, 73-րդ հոդվածներին, քանի որ ՀՀ Սահմանադրության 73-րդ հոդվածը սահմանում է, որ անձի իրավական վիճակը

¹ Տե՛ս ՀՀՊՏ 1998.09.09/20(53):

վատթարացնող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ չունեն: Դիմողները պնդում են, որ վիճարկվող դրույթները հակասում են ՀՀ Սահմանադրության 73-րդ հոդվածի դրույթին, քանի որ այն անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքն է, որով վատթարացվել է նախկին ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի դրույթը:

Դիմողները նշում են, որ խնդրո առարկա դրույթները հակասում են ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածին, քանի որ չեն ապահովում անկախ և անաչառ դատարանի կողմից իրենց գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունքը, և վիճարկվող դրույթների առկայության պայմաններում իրենք զրկվել են վճռաբեկ բողոքի քննության իրավունքից: Ըստ դիմողների՝ առկա է օրենքով նախատեսված իրավական արգելք, որը խոչընդոտում է դատարանի մատչելիությունը:

ՀՀ Սահմանադրական դատարանի 19.12.2016թ. ՍԴԴԿՈ/2-33 որոշմամբ նշված անհատական սահմանադրական դիմումի ընդունելիությունը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի 5-րդ մասի մասով մերժվել է, իսկ 233.1-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործն ընդունվել է քննության:

Միաժամանակ, «ՄԼԼ Ինդասթրիզ» ՍՊԸ-ն դիմել է ՀՀ Սահմանադրական դատարան՝ խնդրելով. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233-րդ հոդվածի 2-րդ մասի առնչությամբ ձևավորված իրավակիրառ պրակտիկան՝ այնքանով, որքանով չի ապահովում վճռաբեկ բողոքը վերադարձնելիս բողոքում առկա բոլոր թերությունների մատնանշումը, և 233.1-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը՝ դատական պրակտիկայում դրան տրված մեկնաբանությամբ՝ այնքանով, որքանով, վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշմամբ վճռաբեկ դատարանի կողմից չմատնանշված և կրկին ներկայացված բողոքում չվերացված թերությունները, ինչպես նաև այնքանով, որքանով վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշումը դիտվում է որպես բողոքում նշված հիմքով նույն գործով կայացված որոշում, դիտվում են որպես բողոքն առանց քննության թողնելու հիմք, ճանաչել ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր:

Դիմողը գտնում է, որ վճռաբեկ բողոքի պարագայում վճռաբեկ բողոքի թերությունները շտկելու հնարավորության օգտագործումը կախվածության մեջ է դրված ՀՀ վճռաբեկ դատարանի հայեցողությունից, և այդ հայեցողության կամայական դրսևորման դեմ բացակայում է արդյունավետ պաշտպանության որևէ միջոց: Նման պայմաններում, ի խախտումն վերոհիշյալ իրավակարգավորման տրամաբանության, վիճարկվող դրույթի կիրառումը թույլ է տալիս, որ բողոքի թերությունները խոչընդոտեն անձի՝ դատական ակտը բողոքարկելու իրավունքը: Դիմողի կարծիքով՝ վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշումը չի կարող համարվել բողոքում նշված հիմքով

նույն գործով կայացված որոշում: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233.1-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ իրավական նշանակություն է տրվում բողոքում նշված հիմքով նույն գործով վճռաբեկ դատարանի որոշման առկայությանը կամ բացակայությանը: Բողոքում նշված հիմքով նույն գործով ՀՀ վճռաբեկ դատարանի որոշման առկայության կամ բացակայության փաստը չի փոխվում կախված նրանից, թե արդյո՞ք կրկին ներկայացվող բողոքը բավարարում է բողոքին ներկայացվող պահանջները, թե՛ ոչ: Նման իրավակիրառ պրակտիկա ձևավորելով՝ արհեստականորեն առաջանում է իրավական արգելք՝ անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի իրացման գործընթացում:

ՀՀ սահմանադրական դատարանի 09.03.2017թ. ՍԴԴԿՈ/1-5 որոշմամբ «ՄԼԼ Ինդասթրիզ» ՍՊԸ-ի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233-րդ հոդվածի 2-րդ մասի և 233.1-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործն ընդունվել է քննության:

Նշված անհատական սահմանադրական դիմումներով ՀՀ սահմանադրական դատարանում գործի քննությունը նշանակված է 2017 թվականի ապրիլի 18-ին:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Դատական պաշտպանության, արդար դատաքննության իրավունքի և արդարադատության մատչելիության բովանդակությունը

Դատական պաշտպանության, արդար դատաքննության և արդարադատության մատչելիության իրավունքի բովանդակությունը ՀՀ Սահմանադրական դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական պրակտիկային համապատասխան մի շարք գործերով արդեն իսկ բացահայտվել է Գիտավերլուծական կենտրոնի կողմից նախկինում տրված եզրակացություններով:

ՀՀ գործող Սահմանադրությամբ անձի՝ դատական պաշտպանության իրավունքն ամրագրող սահմանադրաիրավական նորմերի բովանդակությունը հետևյալն է.

Հոդված 61. Դատական պաշտպանության իրավունքը և մարդու իրավունքների պաշտպանության միջազգային մարմիններ դիմելու իրավունքը

1. Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

...

Հոդված 63. Արդար դատաքննության իրավունքը

1. Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

...

Նշված սահմանադրաիրավական նորմերը համանման բովանդակությամբ սահմանված էին մինչև 2015թ. դեկտեմբերի 6-ի հանրաքվեով ընդունված սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածներում, որոնց վերաբերյալ ՀՀ Սահմանադրական դատարանն իր դիրքորոշումն է արտահայտել 2006թ. հոկտեմբերի 18-ի ՍԴՈ-652, 2006թ. նոյեմբերի 16-ի ՍԴՈ-665, 2007թ. ապրիլի 9-ի ՍԴՈ-690 և մի շարք այլ որոշումներում:

ՀՀ Սահմանադրական դատարանն իր 2006թ. հոկտեմբերի 18-ի ՍԴՈ-652, 2006թ. նոյեմբերի 16-ի ՍԴՈ-665, 2007թ. ապրիլի 9-ի ՍԴՈ-690 և մի շարք այլ որոշումներով բազմիցս անդրադառնալով արդարադատության մատչելիության և արդյունավետության խնդիրներին, առաջնորդվելով ՀՀ Սահմանադրության 1, 3, 14, 18, 19, 42, 43 և այլ հոդվածներով, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի, միջազգային իրավական այլ փաստաթղթերում ամրագրված հիմնադրույթներով, վկայակոչելով նաև ժողովրդավարության զարգացման միջազգային փորձն ու Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկան, կարևորել է անձի իրավունքների արդյունավետ պաշտպանությունը երաշխավորելու համար նորմատիվ իրավական բավարար նախադրյալների ստեղծումն ու զարգացումը՝ հատկապես միջազգային այն պարտավորությունների շրջանակներում, որպիսիք Հայաստանի Հանրապետությունն ստանձնել է Եվրոպայի խորհրդի առջև: Միաժամանակ, ՀՀ Սահմանադրական դատարանը կարևորել է այդ պարտավորություններից բխող ներպետական հայեցողական որոշակի ազատությունն արդարադատության մատչելիության և, հատկապես՝ դատական բողոքարկման իրավունքի օրենսդրական սահմանափակումների հարցում:

Դատական պաշտպանության իրավունքն իր ամրագրումն է գտել մի շարք միջազգային իրավական փաստաթղթերում, այդ թվում՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» 1950թ. եվրոպական կոնվենցիայում և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական նախադեպերում: Այս իրավունքի հիմնական բովանդակությունը հանգում է անձի իրավունքների և ազատությունների պաշտպանության համար դատարան դիմելու իրավունքի երաշխավորմանը և պետության կողմից այդ իրավունքի իրացման համար արդյունավետ միջոցների և պայմանների ստեղծման պարտականությանը:

Անձի իրավունքների ապահովման ու պաշտպանության տեսանկյունից ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի նպատակն իրավունքների խախտումների մասին անձի պնդումների դատական քննության և այդպիսի խախտումների հետևանքները վերացնելու իրավունքի երաշխավորումն է: Այդ իրավունքը սահմանափակման ենթակա չէ, և արդար դատավարության իրավունքը ցանկացած ժողովրդավարական հասարակության հիմնական հատկանիշներից մեկն է¹:

Անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքից ածանցվում է պետության պոզիտիվ պարտականությունը՝ ապահովել այն թե՛ նորմաստեղծ, թե՛ իրավակիրառման գործունեություն իրականացնելիս: Դա ենթադրում է, մի դեպքում, օրենսդրի պարտականությունը՝ լիարժեք դատական պաշտպանության հնարավորություն և մեխանիզմներ ամրագրել օրենքներում, մյուս կողմից, իրավակիրառողի պարտականությունը՝ առանց բացառությունների քննարկման ընդունել անձանց՝ օրինական կարգով իրենց ուղղված դիմումները, որոնցով նրանք հայցում են իրավական պաշտպանություն իրենց իրավունքների ենթադրյալ խախտումներից:²

ՀՀ Սահմանադրության՝ դատական պաշտպանության իրավունքն ամրագրող 18-րդ հոդվածը ՀՀ սահմանադրական դատարանի դատական պրակտիկայում, որպես կանոն, վկայակոչվում է 19-րդ հոդվածի հետ սերտ միասնության մեջ՝ որպես իրենից մեկ միասնական իրավական երևույթ ներկայացնող: Դա մասնավորապես վերաբերում է արդարադատության մատչելիության իրավունքին՝ որպես արդար դատաքննության իրավունքի տարրի, որի սահմանադրական ամրագրումը դիտարկվում է 18-րդ և 19-րդ հոդվածներում՝ միաժամանակ և միասնաբար՝ չկոնկրետացնելով դրա սահմանադրական-տեքստային հիմքը³:

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածում ամրագրված արդարադատության մատչելիության իրավունքի՝ որպես արդար դատաքննության իրավունքի տարրի հիմնարար սահմանադրական երաշխիքներն են՝ ա) դատական քննության հավասարություն և արդարացիություն, բ) անկախ և անկողմնակալ դատարան, գ) դատական քննության ողջամիտ ժամկետ և դ) հրապարակայնություն:

Արդար դատաքննության իրավունքի և արդարադատության մատչելիության վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը.

«Դատաքննության իրավունքը, որի մասնավոր տարր է հանդիսանում մատչելիության իրավունքը, չի հանդիսանում բացարձակ իրավունք և **կարող է**

¹ ՀՀ Սահմանադրական դատարան, 2007թ. հունվարի 16, ՍԴՈ-673, 8-րդ կետ:

² ՀՀ Սահմանադրական դատարան, 2007թ. նոյեմբերի 7, ՍԴՈ-719, 6-րդ կետ:

³ ՀՀ Սահմանադրության մեկնաբանություններ, Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի ընդհանուր խմբագրությամբ, Երևան, 2010, էջեր 222-223:

ենթարկվել որոշակի սահմանափակումների, հատկապես, բողոքի ընդունելիության պայմանների առնչությամբ, քանի որ այն իր էությամբ պահանջում է պետության կողմից կարգավորում, որը կարող է փոփոխվել՝ կախված ժամանակից և տեղից, ինչպես հասարակության, այնպես էլ կոնկրետ անձանց պահանջմունքներին և միջոցներին համապատասխան: Պետություններն այս առնչությամբ օգտվում են հայեցողության ազատությունից: Այնուամենայնիվ, դատարանի մատչելիության իրավունքը չի կարող սահմանափակվել այնպես և այն սահմաններով, որ վնասի նրա էությունը, և դրանք համապատասխանում են Կոնվենցիայի 6 հոդվածի 1-ին կետին, **եթե ունեն օրինական նպատակ և կիրառված միջոցների և դրված նպատակի միջև գոյություն ունի արդար հավասարակշռություն»¹:**

Եվրոպական դատարանը միաժամանակ գտնում է. «Բողոք ներկայացնելու համար սահմանված ժամկետների կարգավորումը, անկասկած, նպատակ ունի ապահովել արդարադատության պատշաճ իրականացումը, հատկապես իրավական որոշակիության սկզբունքը: Շահագրգռված անձինք պետք է հաշվի առնեն, որ այդ կանոնները պետք է կիրառվեն»²:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր մի շարք վճիռներում առանձնահատուկ կարևորել է, որ պետությունները պարտավոր են իրենց ներպետական օրենսդրությամբ **անհրաժեշտ իրավական նախադրյալներ** ստեղծել անձի իրավունքների արդյունավետ պաշտպանությունը երաշխավորելու համար:

Այսպիսով, ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված դատական պաշտպանության իրավունքի և արդար դատաքննության էությունը անձի իրավունքների և ազատության պաշտպանության համար դատարան դիմելու, այդ թվում՝ դատական ակտի բողոքարկման իրավունքի սահմանումն է և այդ իրավունքի պատշաճ իրականացման համար պետության կողմից գործուն մեխանիզմների և մատչելի պայմանների ստեղծումն ու երաշխավորումը:

Ըստ Եվրոպական դատարանի դատական պրակտիկայի՝ դատաքննության և դրա մասնավոր տարրը հանդիսացող մատչելիության իրավունքը «բացարձակ իրավունք» չէ և կարող է ենթարկվել որոշակի սահմանափակումների, հատկապես, հայցի (բողոքի կամ դիմումի) ընդունելիության պայմանների առնչությամբ: Սակայն անձի դատական քննության իրավունքի մատչելիությունը և իրավունքների պաշտպանության միջոցների արդյունավետությունն ապահովելու համար պետությունը

¹ Golder v. United Kingdom, 21 feb. 1975, Fayed v. United Kingdom, 25 aug. 1994, Ashingdane v. United Kingdom, 28 may 1985, Garcia Manibardo v. Spain (15 feb. 2000), 29.06.2000, Bellet v. France, 20 nov. 1995, Philis v. Greece, 27 aug. 1991, Tolstoy Miloslavsky v. United Kingdom, 23 jun. 1995:

² Perez de Rada Cavanilles v. Spain, 28 oct. 1998, Societe anonyme "Sotiris et Nikos Kouras ATTEE" v. Greece (16 nov. 2000), 16 feb. 2001:

կաշկանդված է պատշաճ պայմաններ և մեխանիզմներ մշակելու և երաշխավորելու պարտականությամբ:

ՀՀ Սահմանադրական դատարանի դիրքորոշմամբ՝ «իրեն ուղղված դիմումների հանդեպ դատարանի կողմից անգործություն ցուցաբերելը, ըստ էության, խաթարում է դատական պաշտպանության իրավունքի էությունը: Նման մոտեցումն անհնարին է դարձնում արդարադատությունը, այն դառնում է անձանց համար ոչ մատչելի: Նման իրավիճակն անհամատեղելի է իրավական պետության սահմանադրաիրավական սկզբունքների հետ:

Դատարանի՝ արդարադատության գործառույթ իրականացնելու միակ հիմքը օրենքով սահմանված կարգով իրեն ուղղված դատական պաշտպանության պահանջ պարունակող դիմումների քննությունն է: Առաջին ատյանի դատարանը որևէ հայեցողություն չունի օրենքին համապատասխանող դիմումին ընթացք տալու կամ չտալու հարցում՝ այն պետք է ընդունվի վարույթ և քննվի անվերապահորեն և առանց որևէ բացառության: Օրենքին չհամապատասխանող դիմումները վարույթ չեն ընդունվում, սակայն, եթե դրանք ժամանակին շտկվում են, ապա կարող են վերստին ներկայացվել: Այլ է իրավիճակը վերադաս դատական ատյաններում, որոնցում դիմումի թույլատրելիության պահանջները կարող են ավելի խիստ լինել: Սակայն այս ատյաններում ևս դիմումների ընդունումը դատարանի վարույթ չի կարող իրականացվել կամայականորեն:

Օրենսդիր մարմնի խնդիրն է ազգային դատավարական իրավունքում ամրագրելու անգործության հաղթահարման արդյունավետ մեխանիզմներ: Հարցը վերաբերում է դատական պաշտպանության արդյունավետ միջոցների երաշխավորմանը՝ հենց անգործության դեմ գործուն իրավական երաշխիքներ ձեռնարկելու եղանակով, ապահովելու և երաշխավորելու մարդու արդյունավետ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքը¹:

ՀՀ Սահմանադրական դատարանն իր 2007թ. ապրիլի 9-ի թիվ ՍԴՈ-690 որոշման մեջ մասնավորապես արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը.

«Սահմանադրական դատարանը գտնում է, որ սահմանադրաիրավական վերոհիշյալ նորմերի ընդհանուր բովանդակությունից հետևում է.

...գ) ընթացիկ օրենսդրության խնդիրն է նյութական և ընթացակարգային նորմերի միջոցով սահմանել ու մանրամասնել ինչպես ՀՀ վճռաբեկ դատարանի սահմանադրական կարգավիճակից բխող, այնպես էլ ընդհանուր իրավասության և մասնագիտացված ստորադաս դատարանների լիազորությունների շրջանակը, իրականացման կարգն ու պայմանները...»:

Կամ, ՀՀ Սահմանադրական դատարանն իր 08.10.2008 թիվ ՍԴՈ-765 որոշմամբ

¹ ՀՀ սահմանադրական դատարան, 2007թ. նոյեմբերի 7, ՍԴՈ-719, 6-րդ կետ:

արձանագրել է.

«Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ հստակ ձևավորված նախադեպային իրավունքի համաձայն՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիան Պայմանավորվող պետություններին չի պարտադրում ստեղծել վերաքննիչ կամ վճռաբեկ դատարաններ, այնուամենայնիվ, եթե ստեղծվել է, պետք է ապահովվի, որ շահագրգիռ անձինք այդ դատարաններում ևս օգտվեն Կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված՝ արդար դատաքննության հիմնարար երաշխիքներից, այդ թվում՝ նաև քաղաքացիական իրավունքների և պարտականությունների կապակցությամբ դատարանի մատչելիությունը:

Իսկ 15.07.2011թ. թիվ ՍԴՈ-984 որոշմամբ ՀՀ Սահմանադրական դատարանը հատուկ նշել է. «Սահմանադրական դատարանի որոշման հիման վրա **դատական ակտերի վերանայման ինստիտուտի** ողջ բովանդակությունը հանգում է նրան, որ այդ ինստիտուտի միջոցով **ապահովվում է խախտված սահմանադրական իրավունքների վերականգնումը**: Խախտված իրավունքների վերականգնումը պահանջում է խախտման արդյունքում տվյալ անձի համար առաջացած բացասական հետևանքների վերացում, ինչն իր հերթին պահանջում է հնարավորինս վերականգնել մինչև իրավախախտումը գոյություն ունեցած վիճակը (restitutio in integrum): Այն դեպքում, երբ անձի սահմանադրական իրավունքը խախտվել է օրինական ուժի մեջ մտած դատական ակտով, այդ իրավունքի վերականգնման նպատակով մինչև իրավախախտումը գոյություն ունեցած վիճակի վերականգնումը ենթադրում է այնպիսի վիճակի ստեղծում, որը գոյություն է ունեցել տվյալ դատական ակտի բացակայության պայմաններում...»:

Դատական պաշտպանության իրավունքի վերաբերյալ սահմանադրական դատարանի դիրքորոշումներն ամփոփ կերպով արտահայտվել են նաև **12 հուլիսի 2016 թ. ՍԴՈ-1293 որոշման մեջ**, որի 7-րդ կետի համաձայն՝

«7. Իր մի շարք որոշումներով (ՍԴՈ-652, ՍԴՈ-690, ՍԴՈ-719, ՍԴՈ-765, ՍԴՈ-844, ՍԴՈ-873, ՍԴՈ-890, ՍԴՈ-932, ՍԴՈ-942, ՍԴՈ-1037, ՍԴՈ-1052, ՍԴՈ-1115, ՍԴՈ-1127, ՍԴՈ-1190, ՍԴՈ-1192, ՍԴՈ-1196, ՍԴՈ-1197, ՍԴՈ-1220, ՍԴՈ-1222, ՍԴՈ-1257, ՍԴՈ-1289) Սահմանադրական դատարանը հանգամանորեն անդրադարձել է արդարադատության մատչելիության, արդար և արդյունավետ դատաքննության իրավունքների երաշխավորման սահմանադրականության խնդիրներին՝ դրանք դիտարկելով որպես դատական պաշտպանության իրավունքի անհրաժեշտ բաղադրատարրեր՝ հավասարապես ընդգծելով դրանց կարևորությունը դատավարական գործընթացներում:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ 2015թ. փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 61 և 63-րդ հոդվածների իրավակարգավորման հիմքում դրված

են անձի իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության իրավունքի երաշխավորման սահմանադրաիրավական այն սկզբունքները, որոնց համատեքստում Սահմանադրական դատարանն իր վերոհիշյալ որոշումներում արտահայտել է իրավական դիրքորոշումներ:

Սահմանադրական դատարանը վերոթվարկյալ որոշումներում կարևորել է իրավակարգավորման մի շարք սկզբունքներ, որոնք սույն գործով վեճի առարկա նորմի սահմանադրականության գնահատման տեսանկյունից ունեն սկզբունքային նշանակություն, մասնավորապես.

- դատավարական որևէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատարան դիմելու իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը, իմաստազրկել ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը կամ դրա իրացման արգելք հանդիսանալ,

- ընթացակարգային որևէ առանձնահատկություն չի կարող մեկնաբանվել որպես ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված՝ դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակման հիմնավորում,

- դատարանի մատչելիությունը կարող է ունենալ այնպիսի սահմանափակումներ, որոնք չեն խաթարում այդ իրավունքի բուն էությունը,

- **դատարան դիմելիս անձը չպետք է ծանրաբեռնվի ավելորդ ձևական պահանջներով,**

- իրավական որոշակիության ապահովման պահանջից ելնելով՝ դատարանի մատչելիության իրավունքի իրացման համար անհրաժեշտ որոշակի իմպերատիվ նախապայմանի առկայությունն ինքնին չի կարող դիտվել որպես ՀՀ Սահմանադրությանը հակասող: Այլ հարց է, որ նման նախապայմանը պետք է լինի իրագործելի, ողջամիտ և չհանգեցնի իրավունքի էության խախտման,

- ինքնին խնդրահարույց չէ վճռաբեկ բողոքի ընդունելիության այնպիսի պահանջներ սահմանելը, որոնք կարող են ավելի խիստ լինել,

- **դատական ակտի դեմ ներկայացված բողոքի ընդունելիության պայմանները, այդ թվում բողոքարկման ժամկետները չպետք է գերակայեն կամ խոչընդոտեն դատարանի մատչելիության իրավունքի ապահովման երաշխիքները:**

Միաժամանակ, Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վկայակոչել նաև դատարանի մատչելիության սահմանափակումների վերաբերյալ ՄԻԵԴ-ի կողմից ձևավորված իրավական դիրքորոշումները, որոնց համաձայն.

- այս իրավունքը բացարձակ չէ, և պետությունները կարող են այն իրացնելու հնարավորությունը պայմանավորել որոշակի պահանջներով և չափանիշներով (Luordo v. Italy, 2003թ. հոկտեմբերի 17-ի վճիռ, Staroszczyk v. Poland, 2007թ. հուլիսի 9-ի վճիռ, Stanev v. Bulgaria, 2012թ. հունվարի 17-ի վճիռ և այլն),

- պետությունը դատարան դիմելու իրավունքից օգտվելու համար կարող է սահմանել որոշակի պայմաններ, «...պարզապես պետության կողմից կիրառված սահմանափակումները չպետք է այն կերպ կամ այն աստիճանի սահմանափակեն անձի դատարանի մատչելիության իրավունքը, որ վնաս հասցվի այդ իրավունքի բուն էությանը: Բացի այդ, սահմանափակումը 6-րդ հոդվածի 1-ին մասին չի համապատասխանի, եթե այն իրավաչափ նպատակ չի հետապնդում, և եթե կիրառված միջոցների և հետապնդվող նպատակի միջև չկա համաչափության ողջամիտ հարաբերակցություն» (Case of Khalfaoui v. France, application no. 34791/97, 14/03/2000),

- սահմանափակումները չեն կարող համապատասխանել Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին, եթե չեն հետապնդում իրավաչափ նպատակ կամ բացակայում է ընտրված միջոցների և հետապնդվող իրավաչափ նպատակի միջև պատճառական կապը (Case of Marini v. Albania (application no. 3738/02), Judgment of 18 December 2007, para. 113):

Նշված դիրքորոշումները կարևորվում են հատկապես ՀՀ Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) 61 և 63-րդ հոդվածների 1-ին մասերով նախատեսված՝ մարդու արդարադատական իրավունքների իրացման օրենսդրական երաշխիքների ապահովման համար»:

Սույն գործով անհատական սահմանադրական դիմումներով վիճարկվող՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի դրույթների բովանդակությունը հետևյալն է.

«Հոդված 233. Վճռաբեկ բողոքը վերադարձնելը

(...)

2. Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին վճռաբեկ դատարանը կայացնում է որոշում՝ գործը վճռաբեկ դատարանում սրանալու պահից մեկ ամսվա ընթացքում՝ նշելով առկա թերությունները: Վճռաբեկ բողոքը կրկին ներկայացվելու դեպքում ժամկետները հաշվարկվում են վերստին:

(...)»

«Հոդված 233.1. Վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելը

1. Վճռաբեկ բողոքը թողնվում է առանց քննության, եթե՝

(...)

5) բողոքում նշված հիմքով նույն գործով վճռաբեկ դատարանն արդեն իսկ որոշում է կայացրել:

(...)»

Վիճարկվող քաղաքացիադատավարական նորմերի սահմանադրականությունը գնահատելու համար անհրաժեշտ է վերջիններիս բովանդակությունը վերլուծել այլ քաղաքացիադատավարական նորմերի հետ համակարգային կապի և միասնության մեջ, դրանց իմաստին և բովանդակությանը համապատասխան:

Մասնավորապես, ՀՀ քաղ. դատ. օր. 5-րդ բաժինն առանձին հոդվածներով կարգավորում է վճռաբեկ բողոքի բովանդակությունը և սահմանում դրան ներկայացվող դատավարական պահանջները, թվարկում վճռաբեկ բողոք բերելու իրավունք ունեցող անձանց շրջանակը, այդ իրավունքի իրացման սահմանափակումները, վճռաբեկ բողոք ստանալուց հետո վճռաբեկ դատարանի լիազորությունները, վճռաբեկ բողոքի քննության արդյունքում վճռաբեկ դատարանի կողմից կայացվող որոշումների տեսակները, դրան ներկայացվող պահանջները և այլն:

Ընդ որում, համաձայն ՀՀ քաղ. դատ. օր.-ի 233-234-րդ հոդվածների՝ ՀՀ վճռաբեկ դատարանը վճռաբեկ բողոք ստանալիս կայացնում է հետևյալ որոշումներից որևէ մեկը.

- ա) վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին,**
- բ) վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու մասին,**
- գ) վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու մասին,**
- դ) վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին:**

Միաժամանակ, օրենսդիրը սահմանում է նշված որոշումներից յուրաքանչյուրը կայացնելու համապատասխան հիմքերի սպառիչ ցանկը:

Վճռաբեկ բողոքի վերադարձման հիմք է հանդիսանում վճռաբեկ բողոքի՝ ՀՀ քաղ. դատ. օր. 231-րդ հոդվածի պահանջներին անհամապատասխանությունը: Վերջինը սահմանում է վճռաբեկ բողոքի բովանդակությունը և դրան ներկայացվող պահանջները, այդ թվում՝ բողոքին կցվող փաստաթղթերի ցանկը:

Նույն օրենսգրքի 230-րդ հոդվածը սահմանում է, որ *բողոք բերելու հիմքերի առկայության դեպքում վճռաբեկ բողոքը պարզաճ ձևով ուղարկվում է վճռաբեկ դատարան, իսկ բողոքի պարճենը՝ դատական ակտը կայացրած դատարան ու գործին մասնակցող անձանց:*

Այսպիսով, քաղաքացիադատավարական կարգավորումների համաձայն՝ վճռաբեկ բողոքը դատական ակտը կայացրած դատարան ու գործին մասնակցող անձանց ուղարկելը հավաստող ապացույցը վճռաբեկ բողոքին կցելը վերջինիս ներկայացվող դատավարական պահանջ է, որը չպահպանելը հիմք է հանդիսանում վճռաբեկ դատարանի կողմից **վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշում** կայացնելու համար:

Ավելին, օրենսդիրը ՀՀ քաղ. դատ. օր. 233-րդ հոդվածում տարանջատել է վճարել բողոքի «**թերություններ**» (ՀՀ քաղ. դատ. օր. 233-րդ հոդված, մաս 2) և «**ձևական սխալներ**» (ՀՀ քաղ. դատ. օր. 233-րդ հոդված, մաս 3) հասկացությունները, առանց դրանց բովանդակությունը որոշակիացնելու: Այնուամենայնիվ, նշված նորմից կարելի է եզրակացնել, որ «**թերություններ**» հասկացությունը վերաբերում է վճարել բողոքի բովանդակային սխալներին, իսկ «**ձևական սխալները**»՝ վճարել բողոքի ոչ բովանդակային, դրա ձևին ներկայացվող պահանջների խախտումներին: Ընդ որում, երկու դեպքում էլ խոսքը վերաբերում է վճարել բողոքի՝ օրենսդրական այնպիսի պահանջների անհամապատասխանություններին, որոնք կարող են վերացվել բողոքաբերի կողմից, և որոնց վերացումից հետո վճարել բողոքը կարող է կրկին ներկայացվել վճարել դատարան՝ դրա վարույթ ընդունելու հարցը որոշելու համար:

Քննարկվող անհատական սահմանադրական դիմումով բարձրացված հարցի լուծման առնչությամբ կարևոր նշանակություն ունեցող իրավական հարցադրումն այն է, թե արդյո՞ք վճարել դատարանը պարտավոր է վճարել բողոքը վերադարձնելիս մատնանշել դրանում առկա բոլոր թերություններն ու ձևական սխալները, և նույն համատեքստում՝ արդյո՞ք վճարել դատարանն իրավասու է մատնանշելու նոր թերություն կամ ձևական սխալ թերությունը վերացված վճարել բողոքը կրկին ստանալիս:

ՀՀ քաղ. դատ. օր. 233-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը վճարել դատարանի համար սահմանում են մեկամսյա ժամկետ վճարել բողոքը վերադարձնելու մասին որոշում կայացնելու համար: Կարծում ենք, օրենսդրի կողմից նման ժամկետի սահմանումը նպատակ է հետապնդում վճարել դատարանին հնարավորություն ընձեռելու այդ ժամկետի ընթացքում ուսումնասիրել վճարել բողոքը և կից փաստաթղթերը բողոքի վերադարձման հարցը լուծելու համար: Օրենքով սահմանված մեկամսյա ժամկետն այն ողջամիտ ժամանակահատվածն է, որի ընթացքում հնարավոր է պարզել վճարել բողոքի համապատասխանությունը դատավարական բոլոր պահանջներին, բացահայտել դրանում առկա բոլոր թերություններն ու ձևական սխալները և համապատասխան հիմքերի առկայության դեպքում որոշում կայացնել այն վերադարձնելու մասին՝ նշելով առկա թերություններն ու ձևական սխալները: Վճարել դատարանի հայեցողությունը քննարկվող հարցում սահմանափակված է այնքանով, որքանով վերջինս պարտավոր է մեկամսյա ժամկետի ընթացքում բացահայտել վճարել բողոքում առկա բոլոր թերությունները և վճարել բողոքը վերադարձնելու մասին որոշում կայացնելիս մատնանշել դրանք սպառիչ ամբողջությամբ: Հակառակ պարագայում ստացվում է, որ վճարել դատարանը սեփական հայեցողությամբ կարող է վճարել բողոքը վերադարձնել մի քանի անգամ՝ յուրաքանչյուր դեպքում մատնանշելով նոր առանձին թերություն կամ ձևական սխալ: Նման մոտեցումը առնվազն չի բխում անձի՝ ողջամիտ ժամկետում իր գործի արդյունավետ քննության

իրավունքից և լի է կամայականության վտանգով: Ինչպես արդեն նշել ենք, համաձայն Սահմանադրական դատարանի դիրքորոշման՝ դատարան դիմելիս անձը **չպետք է ծանրաբեռնվի ավելորդ ձևական պահանջներով, դատական ակտի դեմ ներկայացված բողոքի ընդունելիության պայմանները չպետք է գերակայեն կամ խոչընդոտեն դատարանի մատչելիության իրավունքի ապահովման երաշխիքները:**

Ընդ որում, եթե վճռաբեկ դատարանը երկրորդ անգամ կրկին ներկայացված վճռաբեկ բողոքում հայտնաբերում է նոր թերություն կամ ձևական սխալ, որի մասին չի հիշատակել իր նախկին՝ վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշման մեջ, իրավասու չէ նոր որոշմամբ վճռաբեկ բողոքը թողնել առանց քննության այնքանով, որքանով առկա չէ վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու օրենքով նախատեսված համապատասխան հիմքերից որևէ մեկը: Այդ դեպքում ևս անձի դատական պաշտպանության իրավունքը և արդարադատության մատչելիության սկզբունքը պահանջում են, որպեսզի վճռաբեկ դատարանը կրկին վերադարձնի վճռաբեկ բողոքը՝ անձին հնարավորություն ընձեռելով իրացնելու իր՝ դատական ակտի բողոքարկման իրավունքը որպես դատական պաշտպանության իրավունքի բաղադրատարր:

Սույն գործի շրջանակներում անհրաժեշտ է պարզել, թե որքանով է սահմանադրությանը համապատասխանում վճռաբեկ դատարանի իրավակիրառ պրակտիկան առ այն, որ վերջինս որոշում է կայացնում **վերադարձված և թերությունները վերացված վճռաբեկ բողոքը առանց քննության թողնելու մասին** այն պատճառաբանությամբ, որ բողոքում նշված հիմքով նույն գործով վճռաբեկ դատարանն արդեն իսկ որոշում է կայացրել (<< քաղ. դատ. օր. 233.1-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետ):

Ինչպես արդեն նշել ենք, վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու հիմքերը սպառիչ թվարկված են << քաղ. դատ. օր. 233.1-րդ հոդվածում, որի համաձայն՝

1. Վճռաբեկ բողոքը թողնվում է առանց քննության, եթե՝

1) վճռաբեկ բողոքը բերվել է սահմանված ժամկետը լրանալուց հետո, և բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը բացակայում է, կամ այն մերժվել է.

2) վճռաբեկ բողոքը ներկայացրել է այն անձը, որը վճռաբեկ բողոք ներկայացնելու իրավունք չուներ.

3) բողոքարկվել է այն դատական ակտը, որը ենթակա չէ բողոքարկման վճռաբեկության կարգով.

4) վճռաբեկ բողոք ներկայացրած անձը մինչև վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշման կայացումը դիմում է ներկայացրել վճռաբեկ բողոքը հետ վերցնելու մասին.

5) բողոքում նշված հիմքով նույն գործով վճռաբեկ դատարանն արդեն իսկ որոշում է կայացրել:

Ակնհայտ է, որ ի տարբերություն վճռաբեկ բողոքը վերադարձնելու հիմքերի՝ վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու հիմքերը վերաբերում են այնպիսի հանգամանքների, որոնք բացառում են վճռաբեկ բողոքի քննության հնարավորությունն ընդհանրապես: Այդ հիմքերում թվարկված հանգամանքներն իրենց բնույթով և բովանդակությամբ այնպիսին են, որոնք հնարավոր չէ վերացնել կամ շտկել դատական ակտի վերանայման հնարավորությունը վերականգնելու համար: Այդ հիմքերի առկայությունը խոչընդոտում է դատական ակտի՝ վճռաբեկության կարգով վերանայմանը:

Նշված հիմքերից է մասնավորապես սույն գործով վեճի առարկա հանդիսացող՝ բողոքում նշված հիմքով նույն գործով վճռաբեկ դատարանի՝ արդեն իսկ կայացված որոշման առկայությունը: Այդ հիմքը վերաբերում է *res judicata* սկզբունքին, որը բացառում է նույն հիմքով նույն առարկայի մասին նույն անձանց միջև վեճի քննության հնարավորությունը դատարանի կողմից:

Արդյո՞ք վճռաբեկ դատարանի կողմից վերադարձված և կրկին դատարան ներկայացված վճռաբեկ բողոքի կապակցությամբ առկա է նույն հիմքով դատարանի կողմից կայացված որոշում, որը բացառում է նույն հիմքով վճռաբեկ բողոքի կրկին քննությունը:

Համաձայն ՀՀ քաղ. դատ. օր. 226-րդ հոդվածի՝

Վճռաբեկ բողոք բերելու հիմքերն են՝

1) դատական սխալը՝ նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի խախտումը, որը կարող էր ազդել գործի ելքի վրա.

2) նոր երևան եկած կամ նոր հանգամանքները:

Համաձայն ՀՀ քաղ. դատ. օր. 224-րդ հոդվածի 1-ին մասի՝

Վերաքննության կարգով բողոքարկման ենթակա գործն ըստ էության լուծող դատական ակտերն անձը չի կարող բողոքարկել վճռաբեկ դատարանում, եթե նա նույն հիմքերով չի բողոքարկել դատական ակտը վերաքննիչ դատարանում:

Այսպիսով, ակնհայտ է, որ վճռաբեկ բողոքը վերադարձնելու և վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու մասին որոշումներն էականորեն միմյանցից տարբերվող որոշումներ են, որոնք միմյանցից տարբերվում են դրանց կայացման հիմքերով և դատավարական հետևանքներով: Վճռաբեկ բողոքի հիմքերը գործի ելքի վրա ազդող նյութական կամ դատավարական իրավունքի խախտումներն են կամ նոր երևան եկած կամ նոր հանգամանքները, որոնց վերաբերյալ վճռաբեկ դատարանի կայացրած որոշումը բացառում է վճռաբեկ բողոքի քննությունը և հիմք է հանդիսանում այն առանց քննության թողնելու մասին որոշում կայացնելու համար և որը բացառում է

վճաբեկ բողոքի կրկին քննությունը, իսկ վճաբեկ բողոքը վերադարձնելու հիմքերը դրանում առկա այն թերությունները կամ ձևական սխալներն են, որոնք կարող են շտկվել և, որոնց վերացումից հետո վճաբեկ բողոքը կարող է կրկին ներկայացվել դատարան: Վճաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշումը չի կարող դիտվել նույն հիմքով վճաբեկ դատարանի կողմից կայացված որոշում, քանի որ վճաբեկ բողոքը վերադարձնելիս վճաբեկ դատարանը չի անդրադառնում վճաբեկ բողոքի հիմքերին: Այդ հիմքերին անդրադարձը կատարվում է միայն վճաբեկ բողոքի վերադարձման հիմքերի բացակայության դեպքում, երբ վճաբեկ բողոքը բավարարում է օրենսդրությամբ դրան ներկայացվող բոլոր պահանջներին:

Վճաբեկ բողոքը վերադարձնելու և վճաբեկ բողոքն առանց քննության թողնելու հիմքերի միախառնումը վճաբեկ դատարանի կողմից խաթարում է անձի դատական պաշտպանության իրավունքը և արդարադատության մատչելիությանը դարձնում անարդյունավետ:

Ինչ վերաբերում է իրավական որոշակիության սկզբունքին, ապա այն իր ամրագրումն է գտել ՀՀ Սահմանադրության 79-րդ հոդվածում:

Այսպես,

Հոդված 79. Որոշակիության սկզբունքը

Հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ:

Իրավական որոշակիության սկզբունքը հանդիսանում է պետական իշխանության նկատմամբ վստահության և իրավական պետության սկզբունքների կարևոր բաղադրատարրերից մեկը: ՀՀ սահմանադրական դատարանն իր պրակտիկայում բազմիցս անդրադարձել է **լեգիտիմ ակնկալիքների հանդեպ հարգանքի** սկզբունքին:¹

«Իրավական որոշակիության, իրավական անվտանգության և օրինական ակնկալիքների իրավունքի պաշտպանության սկզբունքները հանդիսանում են իրավական պետության ու իրավունքի գերակայության երաշխավորման անբաժանելի տարրերը: Սահմանադրական դատարանը 2006թ. ապրիլի 18-ի ՍԴՈ-630 որոշման մեջ, մասնավորապես, արձանագրել է, որ «...օրենքը պետք է համապատասխանի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք

¹ Տե՛ս, օրինակ, ՀՀ սահմանադրական դատարանի 04.05.2010 թիվ ՍԴՈ-881, 09.09.2008 թիվ ՍԴՈ-758 որոշումները:

վճիռներում արտահայտված այն իրավական դիրքորոշմանը, համաձայն որի՝ որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության (*res judicata*) սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը»։ Առավել ևս իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է **անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ սպասելիքները**։ Բացի դրանից, իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ»։¹

Վիճարկվող իրավակարգավորումները, կարծում ենք, իրավական որոշակիության տեսանկյունից կասկած չեն հարուցում և լիովին բխում են Սահմանադրության համապատասխան դրույթներից։ Խնդիրն առավելապես իրավակիրառ պրակտիկան է, որի սահմանադրականությունը, ինչպես արդեն նշել ենք, խնդրահարույց է։

Ամփոփելով վերոգրյալը՝ Կենտրոնը գտնում է.

- ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233-րդ հոդվածի 2-րդ մասը և 233.1-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը,
- ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233-րդ հոդվածի 2-րդ մասի և 233.1-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի իրավակիրառ պրակտիկայի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանությունը խնդրահարույց է։

Համակարգող՝

Լյուդվիկ Դավթյան

¹ ՀՀ սահմանադրական դատարանի 02.04.2014թ. թիվ ՄԴՈ-1142 որոշումը։